ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

0010, ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 5,
Հեռ. (+37410) 511722

ԴԴ6-Ե-

7 մարտի 2024 թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՀՐԱՉՅԱ ՄԵԽԱԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մեխակյան,

Սույն թվականի մարտի 4-ին ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է Լևոն Նորիկի Մելքոնյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով թիվ ՍԴ/0065/01/22 քրեական վարույթը և տարածքային ընդդատության հարցը լուծելու համար վարույթը ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Ձեր՝ 2024 թվականի փետրվարի 29-ի որոշումը:

Վերոնշյալ որոշմամբ արձանագրվել է, որ Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 15-ին որոշմամբ թիվ ՀԿԴ/0118/01/22 (ՍԴ/0065/01/22) քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության փոխանցվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որի ուսումնասիրության արդյունքում Ձեր կողմից փաստվել է, որ այն ընդդատյա չէ Արմավիրի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և վարույթի **տարածքային ընդդատությունը** որոշելու համար թիվ ՍԴ/0065/01/22 քրեական վարույթը Ձեր կողմից ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննությունների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն*

ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:

2. Եթե հիմնական դատաքննությունների ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության:

3. Մինչև վարույթն ըստ ընդդատության փոխանցելը կարող են կատարվել միայն անհետաձգելի վարութային գործողություններ:

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը (…)»:

Մեջբերված իրավակարգավորումներից ուղղակիորեն հետևում է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատին վերապահված է վարույթի փոխանցման արդյունքում ***առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև վեճի առկայության դեպքում վարույթի տարածքային ընդդատության*** հարցի լուծման իրավասությունը: Մինչդեռ վարույթի նյութերից երևում է, որ Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 15-ին որոշմամբ թիվ ՀԿԴ/0118/01/22 (ՍԴ/0065/01/22) քրեական վարույթը փոխանցվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ առարկայական ընդդատության, որի պայմաններում Ձեր՝ 2024 թվականի փետրվարի 29-ի որոշմամբ արտահայտված դիրքորոշումն առ այն, որ տվյալ քրեական վարույթն ընդդատյա չէ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, ինքնին բավարար չէ ***առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների*** միջև վարույթի տարածքային ընդդատության վերաբերյալ անհամաձայնության առկայությունը փաստելու, և ըստ այդմ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված ընթացակարգը գործադրելու համար, նկատի ունենալով, որ առկա

չէ նույն հարցի վերաբերյալ վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հակառակ դիրքորոշում:

Վերոգրյալի հաշվառմամբ վերադարձվում է թիվ ՍԴ/0065/01/22 քրեական վարույթը:

Առդիր՝ թիվ ՍԴ/0065/01/22 վարույթը՝ քառասունվեց հատորից (համապատասխանաբար՝ 325, 211, 264, 300, 145, 193, 203, 259, 288, 246, 241, 259, 255, 281, 250, 297, 302, 283, 269, 249, 84, 255, 247, 251, 235, 227, 277, 237, 260, 131, 229, 239, 234, 124, 190, 116, 134, 48, 112, 101, 145, 155, 178, 106, 63, 12 թերթ) և երկու հավելվածից (համապատասխանաբար՝ 225 և 27 թերթ), ինչպես նաև 36-րդ հատորին կցված երկու փաթեթից:

Հարգանքով՝ **ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ**